IQOS

Ուղեցույց

# IQOS 3 DUO

ՀՀ-ում սպառողների համար նախատեսված տեղեկատվությունը այս փաստաթղթում ներկայացված է հայերեն լեզվով:

# IQOS 3 DUO* լիցքավորման սարք




# IQOS 3 DUO* բռնիչ




*IQOS 3 DUO-ն համատեղելի է IQOS 3 սարքի հետ

# Լիցքավորում և մաքրում



Սնուցման սարք



Լիցքավորման լար



IQOS մաքրիչ



IQOS մաքրող փայտիկներ

## ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Օգտվողի ուղեցույցի ամբողջական տարբերակի և հաճախորդների աջակցության համար այցելեք՝ **www.iqos.com**

IQOS CARE PLUS

Լրացուցիչ աջակցության համար այցելեք **www.iqos.com/careplus**

**IQOS CARE PLUS-Ը ԿԱՐՈՂ Է ՀԱՍԱՆԵԼԻ ՉԼԻՆԵԼ ՁԵՐ ԵՐԿՐՈՒՄ:

## Իմացեք ավելին IQOS-ի մասին

Ներբեռնեք IQOS Connect App-ը Google Play-ից

*Google Play-ը և Google Play լոգոն-ն Google LLC-ի ապրանքային նշաններն են:

*IQOS Connect App-ը կարող է հասանելի չլինել ձեր երկրում:

# Ինչպես օգտագործել IQOS-ը






## ՄԻԱՑՐԵՔ

Սեղմեք և պահեք IQOS 3 DUO լիցքավորման սարքի կոճակը 4 վայրկյան, այնուհետև բաց թողեք;

Բռնիչի և լիցքավորման սարքի լուսային ցուցիչները դանդաղ կվառվեն:

## ԼԻՑՔԱՎՈՐԵՔ ԲՌՆԻՉԸ

Տեղադրեք IQOS 3 DUO բռնիչը IQOS 3 DUO Լիցքավորման սարքի մեջ, այնուհետև փակեք այն՝ լիցքավորելու համար:

Բռնիչի լուսային ցուցիչները ցույց կտան լիցքավորման մակարդակը:

# Ստուգեք Բռնիչի լիցքավորման կարգավիճակը




## ՍՏՈՒԳԵՔ ԲՌՆԻՉԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Սեղմեք և բաց թողեք բռնիչի կոճակը լիցքավորման կարգավիճակը ստուգելու համար:

Բռնիչի լուսային ցուցիչները ցույց են տալիս մարտկոցի լիցքավորման մակարդակը:




## ՍՏՈՒԳԵՔ ԲՌՆԻՉԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ IQOS 3 DUO ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՍԱՐՔԻ ՎՐԱ

Սեղմեք և բաց թողեք լիցքավորման սարքի կոճակը IQOS 3 DUO բռնիչի մարտկոցի կարգավիճակը ստուգելու համար:




## ՍՏՈՒԳԵՔ ԲՌՆԻՉԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ IQOS 3 ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ՍԱՐՔԻ ՎՐԱ

Սեղմեք և բաց թողեք լիցքավորման սարքի կոճակը IQOS 3 DUO բռնիչի մարտկոցի կարգավիճակը ստուգելու համար:

# Ինչպես օգտագործել IQOS 3 DUO-ն



## 1. ՏԵՂԱԴՐԵՔ ՍԹԻՔԸ™

Տեղադրեք և զգույշ սեղմեք սթիքը բռնիչի մեջ մինչև ֆիլտրի վրա առկա գծանշումը:



## 2. ՍԿՍԵՔ ՏԱՔԱՑՆԵԼ

Սեղմեք և սեղմած պահեք բռնիչի կոճակը մինչև սպիտակ լույսը(երը) սկսի թարթել և զգաք վիբրացիա:



## 3. ՍԿՍԵՔ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ

Սկսեք օգտագործել այն

ժամանակ, երբ IQOS 3 DUO բռնիչը երկու անգամ ազդակ կտա վիբրացիայով:



## 4. ԱՎԱՐՏ

Վերջին 30 վայրկյանը ազդարարելու համար IQOS 3 DUO բռնիչը երկու անգամ ազդակ կտա վիբրացիայով և լուսային ցուցիչը(ները) կթարթի(են) սպիտակ լույսով:

# Ինչպես օգտագործել IQOS 3 DUO-ն



## 5. ՀԵՌԱՑՐԵՔ ՍԹԻՔԸ

Վեր սահեցրեք բռնիչի կափարիչը և հեռացրեք օգտագործված սթիքը:

# Ինչպես մաքրել բռնիչը







## 1. ՕԳՏԱԳՈՐԾԵՔ IQOS ՄԱՔՐԻՉԸ

Վեր սահեցրեք կափարիչը և ամբողջովին հեռացրեք: Սպասեք մինչև սարքը սառչի, տեղադրեք IQOS մաքրիչը և կատարեք նուրբ շրջանաձև շարժումներ:

## 2. ՕԳՏԱԳՈՐԾԵՔ IQOS ՄԱՔՐՈՂ ՓԱՅՏԻԿՆԵՐԸ

Տեղադրեք IQOS մաքրող փայտիկը բռնիչի ներսի հատվածը մաքրելու համար: Մի դիպչեք լեզվակին IQOS մաքրող փայտիկներով:

# Լրացուցիչ խորհուրդներ



## ՍՏՈՒԳԵՔ ՄԱՐՏԿՈՑԻ ԼԻՑՔԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Սեղմեք և բաց թողեք լիցքավորման սարքի կոճակը լիցքավորման մակարդակը ստուգելու համար:

Լույսերը կվառվեն՝ ցույց տալու մարտկոցի կարգավիճակը:




## ՎԵՐԱԳՈՐԾԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Սեղմեք լիցքավորման սարքի կոճակը մինչև լույսերը կմարեն, այնուհետև բաց թողեք:

Լուսային բոլոր ցուցիչները երկու անգամ կթարթեն, այնուհետև աստիճանաբար կհանգչեն վերագործարկումը հաստատելու համար:



## ՍՊԻՏԱԿ ԼՈՒՅՍԸ ԹԱՐԹՈՒՄ Է ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ

IQOS-ի ջերմաստիճանը բարձր է իր աշխատանքային ջերմաստիճանից (<0°C/>50°C) կամ Բռնիչը պետք է տեղադրվի Լիցքավորման սարքի մեջ՝ փակ դռնակով, մինչ նրա ամբողջական լիցքավորումը:



## ԿԱՐՄԻՐ ԼՈՒՅՍԸ ԹԱՐԹՈՒՄ Է

Վերագործարկեք IQOS3 DUO-ն:

Եթե կարմիր լույսը  թարթելը չի դադարում, խնդրում ենք դիմել Հաճախորդների սպասարկման կենտրոն:

IQOS

Այս նշանը ցույց է տալիս, որ սարքն օգտագործելու ընթացքում հարկավոր է զգույշ լինել:

ՀԱՅԵՐԵՆ

# ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԶԳՈՒՇԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ

## ՎՆԱՍՎԱԾՔՆԵՐԻՑ ԽՈՒՍԱՓԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՆԱԽՔԱՆ ՕԳՏԱԳՈՐԾԵԼԸ, ԿԱՐԴԱՑԵՔ

Այս փաստաթղթում ներառված անվտանգության նախազգուշացումներն ու ցուցումները չեն կարող ընդգրկել բոլոր հնարավոր պայմաններն ու իրավիճակները, որոնք կարող են տեղի ունենալ: Հարկավոր է ուշադիր և զգույշ լինել ցանկացած անձնական օգտագործման էլեկտրական սարք շահագործելիս կամ սպասարկելիս: Պահպանեք այս անվտանգության զգուշացումները և հրահանգները հետագայում անդրադառնալու համար, քանի որ այստեղ կարևոր տեղեկություններ կան: Վնասվելու վտանգը նվազեցնելու համար սարքը մշտապես օգտագործեք արտադրողի ցուցումներին համապատասխան: Սարքը չի պարունակում օգտագործողի կողմից նորոգման ենթակա մասեր: Մի՛ փորձեք բացել, ձևափոխել կամ վերանորոգել սարքի որևէ տարր կամ փոխարինել տարրը կամ մարտկոցները. դա կարող է վնաս պատճառել ձեզ: Սարքը երբեք մի՛ օգտագործեք այն վայրերում, որտեղ առկա են դյուրավառ նյութեր, հեղուկներ և գազեր: Սարքը հարկավոր է լիցքավորել միայն անվտանգ առավելագույն ցածր լարման միջոցով: Լիցքավորեք սարքը միայն ներսում: Հետևյալ նշանը ⊃□⊂ ցույց է տալիս, որ էլեկտրական սարքը սնուցման աղբյուրին միացնելու համար հարկավոր է ունենալ սնուցման հատուկ առանձնացող բլոկ: Սնուցման բլոկի տեսակը նշված է նշանով: Սնուցման բլոկի տեսակը ներկայացվում է որպես SxxA2x, ինչը նշանակում է, որ սարքը լիցքավորելու համար կարող են օգտագործվել սնուցման սարքերի տարբեր մոդելներ՝ կախված տվյալ տարածաշրջանի վարդակների տեսակներից: Լիցքավորեք ձեր սարքը միայն IQOS™ սնուցման սարքերի հետևյալ հաստատված տեսակներից մեկով՝ S52A21, S21A20, S21A22, S21A23, S21A25, S21A27: Մի՛ դիպչեք սարքին, եթե այն խոնավացել է կամ հայտնվել է որևէ հեղուկի մեջ: Մի՛ գցեք սարքը և պահպանեք այն ուժեղ հարվածներից: Մի՛ դիպչեք տաքացնող լեզվակին, դա կարող է վնասել ձեզ կամ շարքից հանել տաքացնող լեզվակը: Մշտապես հեռու պահեք երեխաներից և համոզվեք, որ նրանք չեն խաղում սարքի հետ: Սարքը նախատեսված չէ ֆիզիկական, զգայական կամ մտավոր կարողությունների կամ գիտելիքների պակաս ունեցող անձանց համար, եթե նրանք չեն գտնվում վերահսկողության տակ կամ ծանոթ չեն սարքը օգտագործելու անվտանգության կանոններին և չեն գիտակցում հնարավոր վտանգները: Մի օգտագործեք սարքը հետևյալ դեպքերում՝ ա) Երբ էլեկտրոնային սարքերի օգտագործումն արգելվում է, բ) Ջերմության աղբյուրների վրա կամ կողքին, օրինակ՝ ռադիատորներ կամ բաց կրակ, գ)Եթե այն վնասված է, փչացած կամ էլ ջարդված և դ) Եթե այն ենթարկվել է բարձր ջերմության ազդեցությանը կամ խոնավացել է:

## ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

IQOS-ը աշխատում է բացառապես սթիքերով: Երբեք մի՛ օգտագործեք IQOS-ը սիգարետի կամ նմանատիպ ապրանքների, կամ այն տաքացվող ծխախոտի գլանակների, կամ այն պարագաների հետ, որոնք հաստատված չեն արտադրողի կողմից: Մի հեռացրեք սթիքը օգտագործելու ընթացքում: Սթիքերը նախատեսված են մեկանգամյա օգտագործման համար, և մեկ գլանակը չի կարելի կրկնակի օգտագործել, վառել այն լուցկիով, կրակայրիչով կամ կրակի այլ աղբյուրով:

### ԾԽԱԽՈՏԸ ԵՎ ԴՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՎՐԱ

- IQOS-ը անվտանգ չէ:
- Սթիքերը պարունակում են նիկոտին, ինչը կախվածություն է առաջացնում:
- Առողջության վրա ծխախոտի ազդեցության ռիսկերը կրճատելու լավագույն տարբերակը ծխախոտ և նիկոտին օգտագործելուց ընդհանրապես հրաժարվելն է:

**ՆԻԿՈՏԻՆ**

- Նիկոտինը բնականորեն առկա է սթիքերում օգտագործվող ծխախոտի մեջ:
- Նիկոտինը առաջացնում է կախվածություն և կարող է նաև առաջացնել կողմնակի ազդեցություններ, որոնք նման են նիկոտին պարունակող այլ ապրանքների հետ կապված ազդեցությանը, ինչպիսիք են գլխացավը, սրտխառնոցը կամ կոկորդի գրգռվածությունը: Եթե դուք զգում եք այս ախտանշանները, դադարեք օգտագործել սթիքերը և դիմեք բժշկի:
- IQOS-ը նախատեսված չէ սրտանոթային խնդիրներ ունեցող մարդկանց կամ շաքարախտով հիվանդների համար:
- IQOS-ը չպետք է օգտագործվի հղիության և կրծքով կերակրելու ժամանակ:
- Եթե  դուք հղի եք, կերակրում եք կրծքով կամ կարծում եք, որ հղի եք, հրաժարվեք ծխախոտից ու նիկոտինից և խորհրդակցեք բժշկի հետ:

**ԵՐԵԽԱՆԵՐ ՈՒ ԴԵՌԱՀԱՍՆԵՐ**

- IQOS-ը նախատեսված է միայն չափահասների համար:
- Երեխաներն ու դեռահասները ոչ մի դեպքում չպետք է օգտագործեն IQOS:

## ⚠ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ

**⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԽԵՂԴՎԵԼՈՒ ԵՎ ԿՈՒԼ ՏԱԼՈՒ ՎՏԱՆԳԸ**

Պահեք սթիքերը երեխաների և կենդանիների համար անհասանելի վայրում:

- ԽԵՂԴՎԵԼՈՒ ՎՏԱՆԳ. սթիքերը պարունակում են փոքր մասեր:
- ԿՈՒԼ ՏԱԼՈՒ ՎՏԱՆԳ. սթիքը կուլ տալու դեպքում անմիջապես դիմեք բժշկի՝ նիկոտինը կուլ տալու վտանգի պատճառով:

# *Էլեկտրական մասերի հետ կապված վտանգներ*

Անվտանգության զգուշացումները և հրահանգները չպահպանելու դեպքում կարող է առաջանալ հրդեհ, պայթյուն, էլեկտրահարում, մարմնական վնասվածք կամ վնասել արտադրանքը կամ այլ գույք.

- IQOS–ի օգտագործումը թույլատրվում է միայն նախատեսված օգտագործողներին:
- IQOS լիցքավորման սարքը լիցքավորեք միայն IQOS–ի սնուցման սարքի հաստատված մոդելով, որը տրամադրվել է իր տուփի հետ կամ հասանելի է ձեր տարածքային կամ IQOS-ի առցանց խանութներում: IQOS–ի հոսանքի սնուցման սարքի մոդելների ցանկին

կարող եք ծանոթանալ այս Օգտագործողի ուղեցույցի Տեխնիկական տվյալներ բաժնում:

- IQOS–ի հետ մի օգտագործեք այլ ապրանքանիշների սնուցման սարքեր:
- IQOS Լիցքավորման սարքը լիցքավորեք միայն անվտանգ գերցածր լարման միջոցով: Լարման վերաբերյալ մանրամասներին կարող եք ծանոթանալ այս Օգտագործողի ուղեցույցի Տեխնիկական տվյալներ բաժնում:
- Մի օգտագործեք IQOS-ն այնպիսի տեղերում, որտեղ արգելված է էլեկտրական սարքերի օգտագործումը:
- IQOS Լիցքավորման սարքը լիցքավորեք միայն փակ տարածություններում, ինչպես ցույց է տալիս նշան ⌂–ն:
- Մի օգտագործեք IQOS–ը կամ լիցքավորեք IQOS Լիցքավորման սարքը և/կամ IQOS-ի լրասարքերը, եթե դրանք վնասված են, ամբողջական չեն կամ կոտրված են:
- Մի օգտագործեք IQOS–ը, եթե նկատում եք արտահոսք մարտկոցից:
- Մի օգտագործեք, լիցքավորեք կամ պահեք IQOS-ը բարձր ջերմաստիճանային պայմաններում (օրինակ՝ ամռանը ավտոմեքենայի մեջ, կամ ջեռուցման աղբյուրների՝ ռադիատորների կամ ջեռոցների մոտ): Մի օգտագործեք IQOS-ը դյուրավառ նյութերի, հեղուկների և գազերի առկայության դեպքում:
- Երբեք մի գցեք IQOS-ը կամ իր լրասարքերը ջրի և/կամ այլ հեղուկների մեջ և մի թրջեք դրանք: Թրջվելու դեպքում ձեռք մի տվեք IQOS-ին և/կամ լրասարքերին:

- IQOS–ը և/կամ իր լրասարքերը թափելու դեպքում երբեք մի նետեք կենցաղային աղբի հետ, քանի որ այն կարող է շփվել ջրի և/կամ այլ հեղուկների հետ:
- Պարբերաբար մաքրեք IQOS Լիցքավորման սարքի վրայի USB լիցքավորման միացքը՝ օտար մասնիկների (օրինակ՝ փոշեհատիկների) կուտակումից զերծ պահելու համար:
- Եթե լիցքավորման ընթացքում IQOS–ը և/կամ լրասարքերը գերտաքանում են, ծուխ է դուրս գալիս, բոցավառվում կամ վառվում են, անջատեք հոսանքի աղբյուրից:
- Գերտաքանալու, ծուխ դուրս գալու, բոցավառվելու կամ վառվելու դեպքում ձեռք մի տվեք IQOS-ին և/կամ լրասարքերին:
- Զգույշ վարվեք: Վայր մի գցեք IQOS–ը և ուժեղ հարվածի մի ենթարկեք:
- Մի փորձեք բացել, սպասարկել, փոփոխել կամ վերանորոգել IQOS–ի բաղադրիչ մասերը, կամ փոխարինել դրանք կամ մարտկոցը:
- Օգտագործեք IQOS-ը 0°–ից 50°C ջերմաստիճանի միջակայքում:

**⚠ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՐՏԿՈՑԻ ՎՏԱՆԳ**

IQOS-ը սնուցվում է լիթիում-իոնային հերմետիկ մարտկոցներով (Li-ion): Օգտագործման նորմալ պայմաններում մարտկոցը հերմետիկ է: Եթե տեղի է ունենում մարտկոցի հեղուկի արտահոսք, հետևեք նախազգուշության այս միջոցներին՝

- Եթե կուլ եք տվել հեղուկը, անմիջապես դիմեք բժշկի: Փսխում մի՛ առաջացրեք, ոչինչ մի կերեք և մի խմեք:
- Եթե ներշնչել եք հեղուկը, դուրս եկեք մաքուր օդի և դիմեք բժշկի:
- Մաշկի հետ շփման դեպքում, լվացեք ձեռքերը/շփման հատվածը և մի դիպչեք աչքերին:
- Աչքերի հետ շփման դեպքում անմիջապես լվացեք աչքերը հոսող ջրով առնվազն 15 րոպե անընդմեջ և դիմեք բժշկի:

**▲ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ** **ՏԱՔ ԳՈԼՈՐՇՈՒ ՎՏԱՆԳ**

- IQOS-ը ցուրտ ու խոնավ եղանակային պայմաններում օգտագործելիս, գոլորշու մեջ պարունակվող ջուրն առաջացնում է գոլորշու բարձր ջերմաստիճանի զգացողություն:
- Նման զգացումից խուսափելու համար սթիքերը հարկավոր է պահել զով և չոր տեղում: Մի պահեք սարքը բարձր խոնավության պայմաններում կամ արևի ուղիղ ճառագայթների տակ: Մի օգտագործեք IQOS-ը ցուրտ կամ բարձր խոնավության պայմաններում:
- Եթե դուք անհարմարություն եք զգում, դադարեք օգտագործել արտադրանքը և դիմեք բժշկի:

**▲ ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ** **ԱԼԵՐԳԻԿ ՌԵԱԿՑԻԱՅԻ ՎՏԱՆԳ**

- IQOS-ը կարող է ալերգիկ ռեակցիա առաջացնել:
- Դադարեք օգտագործել IQOS-ը և անմիջապես դիմեք բժշկի, եթե դուք զգում եք հետևյալ ախտանշաններից որևէ մեկը, ինչը կարող է լուրջ ալերգիկ ռեակցիայի նշան լինել՝ դեմքի, շրթունքների, լեզվի, լնդերի, կոկորդի կամ մարմնի այտուցվածություն, դժվար շնչառություն կամ շնչահեղձություն:

### ՍԹԻՔԵՐԻ ԲԱՑԱՌԻԿ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ

- IQOS-ը և Սթիքերը գնեք միայն ձեր տարածքային կամ IQOS-ի առցանց խանութներից կամ այլ լիազորված մանրածախ վաճառքի կետերից:
- IQOS–ն օգտագործեք միայն Սթիքերի հետ: Երբեք մի օգտագործեք IQOS-ը ծխախոտի կամ նմանատիպ այլ արտադրանքների հետ, որոնք հաստատված չեն IQOS-ի հետ օգտագործելու համար: Դա կարող է հանգեցնել վնասվածքի:
- Ոչ մի ձևով մի փոփոխեք Սթիքերը կամ մի ավելացրեք որևէ նյութ Սթիքերի մեջ: Դա կարող է հանգեցնել վնասվածքի:

### ԱՆՑԱՆԿԱԼԻ ԵՐԵՎՈՒՅԹՆԵՐԻ ԿԱՄ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԶԵԿՈՒՅՈՒՄ

- Եթե IQOS օգտագործելիս առաջանում է առողջական որևէ խնդիր, դիմեք բժշկի:
- Անցանկալի դեպքերի կամ միջադեպի մասին կարող եք հայտնել՝ զանգահարելով ձեր տարածաշրջանի Հաճախորդների սպասարկման կենտրոն (կոնտակտային տվյալները նշված են Հաճախորդների սպասարկման և երաշխիքի գրքույկում): Հայտնելով անցանկալի դեպքերի , կողմնակի ազդեցությունների մասին՝ դուք կօգնեք լրացուցիչ տեղեկություն հավաքել այս արտադրանքի անվտանգության մասին:
- Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք՝ www.iqos.com

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ IQOS-Ի ԹԱՓՈՆՄԱՆ ՄԱՍԻՆ

### ՎԱՎԵՐ Է ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ և ԵՏՀ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ



Արտադրանքի կամ փաթեթավորման վրա այս նշանը ցույց է տալիս, որ սարքը և դրա բաղադրիչ մասերը (ներառյալ մարտկոցները) չպետք է թափոնվեն ձեր այլ կենցաղային թափոնների հետ միասին: Փոխարենը, խորհուրդ է տրվում թափոնել ձեր օգտագործած սարքավորումը՝ հանձնելով այն էլեկտրական կամ էլեկտրոնային սարքավորումների վերամշակման համար նախատեսված կետին: Օգտագործած մարտկոցները կարող են անվճար վերադարձվել վաճառքի կետեր:

Ձեր օգտագործած սարքավորումների (այդ թվում մարտկոցների) առանձնացված հավաքումը և թափոնումը թույլ կտա պահպանել բնական ռեսուրսները, ինչպես նաև ապահովել դրանց վերամշակումը՝ չվնասելով մարդու առողջությանը և շրջակա միջավայրին: Սարքավորման թափոնացումը չտեսակավորված կենցաղային թափոնի տեսքով (օր.՝ աղբի այրման կամ աղբահանության միջոցով) կարող է բացասական ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա:

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Բռնիչ
IQOS 3 մոդել A1404/IQOS 3 DUO մոդել A1406
Մարտկոցի տեսակը. Լիթիում-իոնային վերալիցքավորվող մարտկոց
Մուտքային հզորություն. 5Վ ⎓ 1,6Ա
Պատրաստված է Չինաստանում:

Լիցքավորման սարք
IQOS 3 մոդել A1504/IQOS 3 DUO մոդել A1505
Մարտկոցի տեսակը. Լիթիում-իոնային վերալիցքավորվող մարտկոց
Մուտքային հզորություն. 5Վ ⎓ 2Ա
Bluetooth® 4.1
Պատրաստված է Չինաստանում

Սնուցման սարք
Մոդել. S52A21, S21A20, S21A22, S21A23, S21A25, S21A27
Մուտքային հզորություն. 100Վ–240Վ~ 50–60Հց 0,3Ա
Ելքային հզորություն. 5Վ ⎓ 2Ս
Ելքային հզորություն. 10,0Վտ
Միջին ակտիվ արդյունավետություն. 79,0%
Առանց բեռնման հզորության ծախսի. <0,09Վտ
USB լար C տիպի

Մաքրիչ
Պատրաստված է Չինաստանում

IQOS ՄԱՔՐՈՂ ՓԱՅՏԻԿՆԵՐ
Պատրաստված է Վիետնամում:
Արտադրված է «Ֆիլիպ Մորրիս Փրոդաքթս Ս.Ա.» պատվերով, Քե Ժանրենո 3, 2000
Նուշատել, Շվեյցարիա:

## ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՄԱՐՏԿՈՑԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ԹԱՓՈՆԱՑՄԱՆ և ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ)

Սպառողներին արգելվում է ինքնուրույն հեռացնել մարտկոցը: Սարքի շահագործման ժամկետի ավարտից հետո մարտկոցը սարքից անվտանգ եղանակով կարող է հեռացնել միայն համապատասխան մասնագիտացած կազմակերպությունը՝ կատարելով հետևյալ գործողությունները:

### IQOS 3 DUO ԳՐՊԱՆԻ ԼԻՑՔԱՎՈՐԻՉ (A1505).

Քայլ 1. Սարքն ապամոնտաժելուց առաջ համոզվեք, որ այն ամբողջությամբ լիցքաթափված է: Հեռացրեք կափարիչը, ապա հեռացրեք երկու կողմերում գտնվող պտուտակները:
Քայլ 2. Լիցքավորիչն անջատեք իրանից:
Քայլ 3. Հանեք պտուտակները և հեռացրեք սևեռակը:
Քայլ 4. Անջատեք բոլոր հարթ տպասալերը և միակցիչը՝ լիցքավորիչի տպասալը հեռացնելու համար:
Քայլ 5. Հեռացրեք մարտկոցը և թափոնացրեք այն տեղական օրենսդրության պահանջների համաձայն:

### IQOS 3 DUO ԲՌՆԻՉ (A1406).

Քայլ 1. Սարքն ապամոնտաժելուց առաջ համոզվեք, որ այն ամբողջությամբ լիցքաթափված է: Բռնիչից հեռացրեք առջևի կափարիչը:
Քայլ 2. Հեռացրեք հետևի կափարիչը:
Քայլ 3. Բռնիչից հեռացրեք սնուցման կոճակը:
Քայլ 4. Հեռացրեք սոսինձը և զոդանյութը՝ մարտկոցը միջին հատվածից և շրջանակից անջատելու համար: Սոսնցի շնորհիվ միջին հատվածը պետք է բացվի:
Քայլ 5. Հեռացրեք մարտկոցը և թափոնացրեք այն տեղական օրենսդրության պահանջների համաձայն:

Սյսպիսով, Philip Morris Products S.A. հայտարարում է, որ IQOS 3 DUO-ն համապատասխանում է 2014/53/ԵՄ հրահանգի հիմնական պահանջներին և այլ համապատասխան դրույթներին: Համապատասխանության պաշտոնական հայտարարագիրը կարող եք գտնել հետևյալ հասցեով՝ www.pmi.com/declarationofconformity
IQOS 3 DUO մոդել A1505, աշխատում է 2.402 – 2.460 ԳՀց հաճախականության միջակայքում՝ առավելագույն 10,0 դԲմ ելքային հզորությամբ: IQOS 3 DUO համակարգի A1505 մոդելը հագեցած է պասիվ NFC-ի թեգով, որը գործում է 13.56 ՄՀց աշխատանքային հաճախականությամբ:

Բռնիչի կամ Լիցքավորման սարքի արտադրման տարեթվի մասին ինֆորմացիա կարող եք ստանալ՝ զանգահարելով հաճախորդների սպասարկման հեռախոսահամարով և հայտնելով տառերից և թվերից բաղկացած 14-նիշանի կոդը, որը գտնվում է Բռնիչի կափարիչի տակ կամ Լիցքավորման սարքի կողային հատվածում:

Սնուցման սարքի արտադրման տարեթվին համապատասխանում է սերիական համարի (SN: YWWDXXXXX) առաջին թիվը, որը նշված է Սնուցման սարքի վրա, որտեղ Y = տարի (1 =2011; 2 = 2012 և այլն.):

USB լարի արտադրման ամսաթիվը նշված է տուփի վրա:

Հայաստանի Հանրապետություն – Ներմուծող և Հայաստանում հաճախորդների բողոքների ընդունման համար պատասխանատու կազմակերպություն «Ֆիլիպ Մորրիս Արմենիա» ՍՊԸ, ՀՀ, Երևան 0010, Վ. Սարգսյան 2

Ղազախստանի Հանրապետություն – Ներմուծող և Ղազախստանում հաճախորդների բողոքների ընդունման համար պատասխանատու կազմակերպություն «Ֆիլիպ Մորրիս Ղազախստան» , Իլյաս Ժանսուղուրով 90, Ուտենի Բատիր բնակավայր, Իլի թաղամաս, Ալմաթայի շրջան, Ղազախստան B40A6M8

Ղազախստանի Հանրապետությունում սպառողների համար նախատեսված տեղեկատվությունը սույն փաստաթղթում տրված է ղազախերեն և ռուսերեն լեզուներով:

Bluetooth® բառը և լոգոները հանդիսանում են Bluetooth SIG, Inc.-ի գրանցված ապրանքային նշանները և դրանց օգտագործումը Philip Morris Products Տ A-ի և նրա հետ փոխկապակցված անձանց կողմից կատարվում է լիցենզիայի հիման վրա:

Այլ ապրանքանիշերը և ապրանքների անվանումները պատկանում են իրենց համապատասխան սեփականատերերին:

© 2020 «Ֆիլիպ Մորրիս Փրոդաքթս Ս.Ա.»

IQOS ապրանքային նշանի իրավունքները պատկանում են «Ֆիլիպ Մորրիս Փրոդաքթս» ընկերությանը, Քե Ժանղենո 3, 2000 Նուշատել, Շվեյցարիա